Биолог. журн. Армении, № 4.(43).1990 УДК 572(479.25)

# ԴԵՄՔԻ ԳՐԱՖԻԿ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԸՍՏ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ)

Մ. Հ. ԱՎԹՈՒՆՅԱՆ

*ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան*

*Վերականգնվել է Գուսանագյուղի մոտ պեղված մ. թ. ա. 7–6 դար. ապրած հայ ռազմիկի դեմքը*

Восстановлено лицо проживающего в VII—VI вв. до н. э. армянского воина, обнаруженного из раскопок близ села Гусанагюх

**Վերականգնում-դեմքի փափուկ հյուսվածքներ-ատամնաոսկր-ռենտգենաբանական չափագրություն**

*Ինչպես հայտնի է, Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների հնագարյան պատկերացումների համաձայն, դամբարանախուցը նավ է, որը հանգուցյալին պետք էր տեղափոխեր հանդերձյալ աշխարհ։ Ըստ նրանց պատկերացման, կարողության տեր մարդկանց, հանդերձյալ կյանքում ևս ծառայում էին իրենց մերձավորները, սպասավորները։ Չար ոգիներից ննջեցյալին պաշտպանելու համար նրա հետ դրվում էին օբսիդիանի կտորներ և միջուկներ, ինչպես նաև նրա զենքերը, աշխատանքի գործիքները, անոթը, խմիչքը, ծիսական պարագաները։ Գուսանագյուղի դամբարանի նյութերի (ննջեցյալների ոսկրային մնացորդներ, խեցեղեն, երկաթյա և բրոնզե իրեր, օբսիդիանի կտորներ և միջուկ, հեսանաքար) հնագիտական և մարդաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ննջեցյալներից մեկը հեծյալ ռազմիկ է, իսկ մյուսը՝ կին։ Տղամարդու կմախքի ոսկորներն ընդհանուր առմամբ պահպանված են։ Գանգի և աջ կոնքոսկրի վրա կան վնասվածքներ, որոնց բնույթը խոսում է այն մասին, որ հանգուցյալը վերքն ստացել է կենդանության օրոք և ապաքինվել է։ Կնոջ կմախքից կա միայն գանգը, որ վկայում է այն մասին, որ ննջեցյալը տեղադրվել է դամբարանում՝ «մասը ներկայացնում է ամբողջը» սկզբունքով։*

*Ներկայումս դամբարանը մեր կողմից վերականգնված է և ցուցադրված իր սկզբնական տեսքի համաձայն։ Շարունակելով վերականգնման աշխատանքները՝ մենք ձեռնարկեցինք հեծյալ ռազմիկի գանգի (նկ., 1) միջոցով դեմքի գրաֆիկական ռեկոնստրուկցիան (նկ., 4)։*

*Ինչպես հայտնի է գանգի միջոցով դեմքի առաջին ռեկոնստրուկցիան (վերականգնումը) կատարել է գերմանացի Շաֆհաուզենը 1877 թվականին [1]։ Այնուհետև վերականգնման աշխատանքներ կատարեցին Կոլմանը՝ Շվեյցարիայում, Մարկլեն՝ Ֆրանսիայում, Մակ Գրեգորը՝ Ամերիկայում։ Արժանին մատուցելով ռեկոնստրուկցիայի այս պիոներներին ասենք նաև, որ նրանք ինչպես ասում են «չոր հողի» վրա չսկսեցին իրենց աշխատանքները։ Պլաստիկական անատոմիայում արդեն հայտնի էին նշակետային այնպիսի մոտեցումներ, ինչպես քթի, ակնագնդի կոպերի կառուցումը, ականջի տեղադրումը։ Դեռևս Լեոնարդո Դա Վինչին քթի ձևերի դասակարգում էր առաջարկում։*

1925 թվականից սկսած պլաստիկ վերականգնման աշխատանքներ սկսեց կատարել Մ. Գերասիմովը՝ [3]՝ Մոսկվայի լաբորատորիայի հիմնադիրը։ Այսօր առանց չափազանցության կարելի է ասել, որ հանձինս Մ. Գերասիմովի և Գ. Լեբեդինսկայայի, [2] այդ լաբորատորիայում կատարված են ամենալավ և ամենախոր հետազոտական աշխատանքներ։




Հայ մարտիկի դեմքի վերականգնման հաջորդական փուլերը։

ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մարդաբանական լաբորատորիայում 1970 թվականից պրոֆ. Ա. Ճաղալյանի ղեկավարությամբ անտրոպոլոգիական հետազոտությունների շարքում կատարվում են նաև գանգի միջոցով դեմքի վերականգնման աշխատանքներ, որոնցից շատերը ներկայացված են հանրապետության թանգարաններում։

Գանգի միջոցով դեմքի վերականգնման համար, ի թիվս վերևում նշված նախադրյալների անհրաժեշտ է նաև իմանալ գանգը ծածկող փափուկ հյուսվածքների հաստությունները, նրա տարբեր շրջաններում։

Դեմքի փափուկ հյուսվածքների հաստությունների բազմակողմ (անատոմիական, ռենտգենաբանական, գերձայնային) հետազոտություններ կատարվում են նաև մեր լաբորատորիայում։ Այդ հետազոտությունները կատարվում են թե ինքնուրույն և թե Մոսկվայի մեր գործընկերների հետ հա-

*մասերը։ Դեմքի փափուկ հյուսվածքների չափանշվածքների հետազոտությունները այսօր դեմքի ռեկոնստրուկցիայի համար կատարվող գիտահետազոտական աշխատանքների կիզակետում են գտնվում, որոնց արդյունքների հիման վրա է կատարվում դեմքի սիլուետի ռեկոնստրուկցիան (Նկ., 2, 3)։*

*Գանգի անտրոպոմետրիկ հետազոտությունները ցույց տվեցին.*

| | |
|---|---|
| *Գանգի երկարությունը* | *— 17,5 սմ* |
| *Գանգի լայնությունը* | *— 14 սմ* |
| *Գանգի բարձրությունը* | *— 14 սմ* |
| *փոքր չափ* | *— 7 սմ* |
| *մեծ չափ* | *— 12 սմ* |
| *Դեմքի լայնությունը* | *— 12,5 սմ* |
| *Գանգի շրջագիծը* | *— 51,5 սմ* |

*Գանգի պրոֆիլային անկյունը—85°։*

*Հետազոտվող գանգը մեզոցեֆալ է, արծվաքիթ։ Վերլուծելով վերոհիշյալ ցուցանիշները, այն կարելի է գնահատել իբրև առաջավոր ասիական (արմենոիդ տիպ)։*

*Շարունակելով Գուսանագյուղի դամբարանի վերականգնման աշխատանքը ծրագրված է այստեղ ներկայացված գրաֆիկ վերականգնման հիման վրա կատարել նրա քանդակային ռեկոնստրուկցիան։*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Герасимов М. М.* Тр. Ин-та этнографии АН СССР, 28, М., 1955.
2. *Лебединская Г. В.* Пластическая реконструкция лица по черепу и пути ее развития. М., 1976.
3. *Лебединская Г. В.* Антропологическая реконструкция и проблемы палеоэтнографии. М., 1973.


Ստացված է 5. II. 1990։